ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2013 թվականի N 156-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԱՄԱԶ 43118-1017-13 ՄԱԿՆԻՇԻ 764 UL 52 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով, համաձայն <<Գորիսի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 2013թվականի հոկտեմբերի 16-ի N 66 գրավոր առաջարկության՝ ընկերության պատկանող ԿԱՄԱԶ 43118-1017-13 մակնիշի ավտոմեքենայի օտարումը թույլտրելու մասին, որոշում եմ՝

1. Թույլատրել <<Գորիսի բժշկական կենտրոն>>փակ բաժնետիրական ընկերությանը օրենսդրությամբ սահմանված կարգով օտարելու ընկերության հաշվեկշռում գտնվող 2005 թվականի արտադրության՝ ԿԱՄԱԶ 43118-1017-13 մակնիշի /տեխնիկական անձնագիր՝ ՎԼԼ N 681492 շարժիչի համարը՝ 2282549, հենասարքը՝ 2236462 համարի, թափքի համարը՝ VIN-XTC 43118 N 52236462, 764 UL 52 պետհամարանիշի ավտոմեքենան:
2. Ընկերության տնօրենին՝ հիմնական միջոցի օտարումն իրականացնել մարզպետարանի ներկայացուցչի մասնակցությամբ:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2013թ. հոկտեմբերի 18
ք. Կապան